ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագրի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագիրը կկարգավորի ՀՀ և ԱՄԷ վարորդական վկայականների հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես.

- Հուշագրի Կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է մյուս Կողմի կողմից այն քաղաքացիներին տրամադրված վավեր վարորդական վկայականը, որոնք ժամանում են ոչ բնակության նպատակով՝ պայմանով, որ վարորդական վկայականի տնօրինողը բավարարում է հուշագրի 2-րդ հոդվածում ներկայացված աղյուսակում նախատեսված՝ վարորդական վկայականների տարբեր կարգերի կապակցությամբ մյուս Կողմի սահմանած նվազագույն տարիքի հետ կապված պահանջները:
-
- Բնակության նպատակով ժամանող քաղաքացիների դեպքում Հուշագրի յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի տրամադրած վարորդական վկայականի փոխանակման համար դիմող անձին ազատում է դրա հետ կապված տեսական և գործնական քննություններից:

Հուշագրի կնքումը բխում է նաև ՀՀ Կառավարության 2021-2026թթ. ծրագրի արտաքին քաղաքականությանը վերաբերվող դրույթներից: Այն, մասնավորապես, կնպաստի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության ընդլայնմանը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՆԳ նախարարությունը «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագրի ստորագրումը համարում է նպատակահարմար:

ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ ***Արմեն Ղազարյան***